



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

12.12.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/90

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Մեգհիլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մեգհիլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական պարագաների
ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնելով «Մեգհիլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից
14.11.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը չկայացած համարելու «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 14.11.2019թ.-ն և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 20.11.2019թ.-ին և 28.11.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 28.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

2. «Մեզիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեզիէլ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնման ընթացակարգ: Մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 14.11.2019թ ժամը 14:00 է: Հայտերի բացման օր է սահմանված 14.11.2019թ, ժամը՝ 14:00: ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնմանը մասնակցելու նպատակով «Մեզիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) ուսումնասիրելով հրավերը՝ տեխնիկական բնութագրերում արձանագրել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների հետ:

Հրավերով սահմանված ժամկետում ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով հրավերի 5, 6, 11, 12, 15, 16, 17, 18, 19, 20, 21 եւ 22 չափաբաժինների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով հարցադրում է ներկայացվել հանձնաժողովին:

Ներկայացված հարցադրումների վերաբերյալ պարզաբանում չի տրվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը:»

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «Գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջեւ մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Համաձայն օրենքի 13-րդ հոդվածի «1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ եւ հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման եւ վճարման պայմանները՝ բացառելով փարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաեւ պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված եւ համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաեւ աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի եւ այլ ոչ գնային պայմանների ամբողջական եւ համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տեղամինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաեւ գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների եւ Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվափոփոխական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաեւ որպես կատարողականի կամ գործառությանին (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն փախուցված մասնակիցներին եւ պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:»

Նկատի ունենալով, որ ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրերում պահանջվող բժշկական պարագաների նկարագրի ձեւակերպումները ներկայացված են այնպիսի չափորոշիչներով, որոնցով կարող են հայտ ներկայացնել կոնկրետ արտադրատեսակ մատակարարող ընկերությունները: Հրավերի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին: Ուստի՝ ընկերությունը հանդես է եկել հարցադրմամբ, սակայն «Գյումրու բժշկական կենտրոն ՓԲ ընկերությունը պարզաբանում չի փրամադրել:

Հրավերի տեխնիկական բնութագրերում առկա են այնպիսի ձեւակերպումներ որոնք հստակ հղում են անում կոնկրետ ֆիրմային անվանման, էսքիզին, մոդոլին եւ առկա են նույնականացնող այնպիսի չափորոշիչներ որոնց առկայությամբ գնման առարկա կարող է ապահովել հստակ մեկ արտադրող:

Օրենսդիրը վերը հիշատակված նորմով իմպերատիվ կանոն է սահմանել, որ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որեւէ առեւտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին.....»:

Ընկերությունը ներկայացրել է հետեւյալ հարցադրումները՝

«Հարգելի հանձնաժողով, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով խնդրում եմ պարզաբանել 5, 6, 11, 12, 15, 16, 17, 18, 19, 20, 21 եւ 22 չափաբաժինների վերաբերյալ հետեւյալ ձեւակերպումները, որոնք նաեւ առաջացնում են ապակողմնորոշում եւ մեր գնահատմամբ սահմանափակումներ հնարավոր հայտատուների համար:

Հրավերով ներկայացված են՝

- չափաբաժին 5 - Կաթեպերներ/Ախտորոշիչ կատեպեր/1
- չափաբաժին 6 - Կաթեպերներ/Ախտորոշիչ կատեպեր/2
- չափաբաժին 11 – Կաթեպերներ Ախտորոշիչ/3
- չափաբաժին 12 - Կաթեպերներ/գայր կատեպեր
- չափաբաժին 15 - դեղապատ ստենտ/1
- չափաբաժին 16 - դեղապատ ստենտ/2
- չափաբաժին 17 - դեղապատ ստենտ/3
- չափաբաժին 18 – բալոնային կաթեպերներ/1
- չափաբաժին 19 - բալոնային կաթեպերներ/2
- չափաբաժին 20 - բալոնային կաթեպերներ/3
- չափաբաժին 21 - բալոնային կաթեպերներ/4

չափաբաժին 22- բալունային կաթետերներ/5

Չափաբաժինները կոտորակով ներկայացված ձեռագրերով, ըստ համարների, ի՞նչ է նշանակում, հայտատուն որպես ինչ պետք է դրանք մեկնաբանի եւ ընկալի, արդյո՞ք դրանք չեն կարող ընկալվել որպես ծածկագրեր, որոնք քողարկված ուղորդում են նշանակում:

5 եւ 11 չափաբաժիններով ներկայացված է 4 եւ 5.2Fr ներքին լուսանցքով ախտորոշիչ կաթետերները բնորոշ են միայն Cordis ֆիրմայի ախտորոշիչ կաթետերներին որը սահմանափակում է մյուս մասնակիցների մասնակցությունը: Ինչպես նաեւ մեր ունեցած 6 փարինների աշխատանքային փորձը ցույց է տալիս որ 4Fr ներքին լուսանցքով ախտորոշիչ կաթետերները չեն օգտագործվում: Ուստի խնդրում եմ պարզաբանել արդյո՞ք համարժեք կոդիտարկվի Medtronic ֆիրմայի միայն 5 Fr (մինչև 27մլ/վ) եւ 6 Fr (մինչև 40մլ/վ) ներքին լուսանցքով ախտորոշիչ կաթետերները

6-րդ չափաբաժնով ներկայացված ախտորոշիչ կաթետերների տեսակները բնորոշ են միայն Terumo ֆիրմայի ախտորոշիչ կաթետերներին ուստի պարզաբանել արդյո՞ք համարժեք կոդիտարկվի Medtronic ֆիրմայի 5 Fr (մինչև 27մլ/վ) եւ 6 Fr (մինչև 40մլ/վ) ներքին լուսանցքով ախտորոշիչ կաթետերները:

12 չափաբաժնով ներկայացված երկարությունները +5% օրինակ 95սմ եթե գումարենք 5% հավասար է լինում 99.75սմ արդյոք դա համարժեք կհամարվի Ձեր կողմից, եթե մեր կողմից առաջարկվող կաթետորը 100սմ է: Ինչպես նաեւ Ձեր կողմից նշված ծայրերի ձեւերը բնորոշ է միայն Cordis ֆիրմայի Vista Bride ապրանքանիշին արդյոք համարժեք կոդիտարկվի Medtronic ֆիրմայի Launcher ապրանքանիշը:

15 չափաբաժնում պահանջվում է դեղապատ ստենտ էվերոլիմուս կամ զոտարալիմուս դեղանյութ արտազատող ծածկ, սակայն ըստ ստորեւ նշված տեխնիկական բնութագիրը բնորոշ է միայն էվերոլիմուս դեղածածկույթով ստենդին ուստի խնդրում ենք պարզաբանել ինչպես կարող է զոտարալիմուս դեղածածկույթով ստենդը համարվել համարժեք:

16, 17 չափաբաժիններով պահանջվում է դեղապատ ստենտ եւ բնութագրերով նշված է, որ դրանք պետք է լինեն էվերոլիմուս, սիրոլիմուս դեղանյութով արդյո՞ք համարժեք կոդիտարկվի զոտարալիմուս դեղանյութով պատված ստենդը, որը նույնպես պատկանում է լիմուս դեղախմբերի ընտանիքին սակայն տեխնիկական չափորոշիչներով նույնը չէ բայց ֆունկցիոնալ առումով հնարավոր է հասնել նույն արդյունքին, ինչը պահանջվում է տեխնիկական բնութագրով:

18, 19, 20, 21, 22 չափաբաժիններով պահանջվում է բալունային կաթետերներ, այս չափաբաժիններում նշված են կաթետրի հստակ երկարությունը, բալունի նյութը,

տրամագիծը, երկարությունը, սակայն նշված սահմանափակումներով արդյո՞ք չի ապահովում մեկ արտադրողից ապրանքի գնում, պարզաբանել նշելով սահմանափակումների անհրաժեշտությունը եւ նպատակը, մինչդեռ՝ տարբեր արտադրողների մոտ երկարությունը, բալունի նյութը, տրամագիծը լինում է տարբեր, սակայն ֆունկցիոնալ առումով թույլ են տալիս հասնել նույն արդյունքին ինչպես նշված է տեխնիկական բնութագրում:»

Պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում օրենքով սահմանված նորմերին եւ հայտատուի համար ստեղծում են ապակողմնորոշող իրավիճակ:

Վիճարկվող հրավերով մասնակցությունն ըստ էության առաջացնում է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

«<< կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 22-րդ կետը սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ եւ արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:»

Պատվիրատուն օրենքին անհամապատասխան հրավեր ներկայացնելով սահմանափակում է հնարավոր հայտատու մասնակիցներին մասնակցելու հայտարարված գնման ընթացակարգին:

Օրենքի 26-րդ հոդվածը սահմանում է գնահատող հանձնաժողովի լիազորությունները, որի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձեւավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝ պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ.

Մեր կողմից ներկայացված հարցադրումներին պարզաբանում չտրամադրելով ըստ էության պատվիրատուն դրսեւորել է անգործություն եւ չի առաջնորդվել օրենսդրի կողմից իրեն տրված լիազորություններով: Հանձնաժողովի դրսեւորած անգործությունը եւս մեկ անգամ հիմնավորումն է այն բանի, որ հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրերը կազմվել են օրենքի խախտումներով:

Ուշագրավ է այն իրողությունը, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից սույն թվականին հայտարարվել էր «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» (ԳԲՔԱ-ԷԱ-2019/22 05.03.2019թ որոշում) եւ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2» (ԳԲՔԱ-ԱՄ-2019/31 05.04.2019թ որոշում) ծածկագրերով հրավերներ, որոնք «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից բողոքարկվել էր բողոքներ քննող անձին եւ երկու բողոքներն էլ բավարարվել էին: Բողոքրկված

հրավերներով պատվիրատուն կազմել է նույն բովանդակությամբ տեխնիկական բնութագրեր, ինչպիսին «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգով է ներկայացրել:

Այսպիսով, կարծես թե պատվիրատուն չի առաջնորդվում այն իրավական կարգավորումներով եւ բողոք քննող անձի կողմից կայացված որոշումներում արտահայտած դիրքորոշմամբ եւ իրավական վերլուծությամբ:

Իրավական նորմերի խախտմամբ կազմված եւ ներկայացված հրավերը չի կարող ապահովել գնումների այն ընթացակարգը, որը նախատեսել է օրենսդիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքով եւ դրանց իրականացված համար ընդունված իրավական ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը պարտավորեցնել չկայացած համարելու «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգը:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության 20.11.2019թ ներկայացրած բողոքի պատասխանի առնչությամբ ներկայացված դիտարկումներով, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ներկայացված բողոքի վերաբերյալ պատվիրատուն բողոքի պատասխանի 1-ին պարբերությամբ վկայակոչում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված «կամ համարժեք» եզրույթը, մինչդեռ՝ «Մեզիէլ» ՍՊ ընկերության հարցադրումը չի վերաբերել նրան, թե ներկայացրած հրավերում բացակայում է վկայակոչված նորմով սահմանված եզրույթ:

Ընկերության ներկայացրած հարցադրումների վերաբերյալ պարզաբանում չտրամադրելու առումով պատվիրատուի պատճառաբանությունը, այն որ եղել են հանգստյան օրեր, ուստի՝ չի տրամադրվել պարզաբանում, դիտարկում ենք անհիմն, քանի որ օրենքով եւ կարգով պարզաբանում տրամադրելու համար սահմանված ժամկետների նկատմամբ չի տարածվում ոչ աշխատանքային օրերի առկայությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Պատվիրատուի վկայակոչմանը ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետին այս դեպքում վերաբերելի չէ, քանի որ, եթե

նույնիսկ հարցադրումներից մի քանիսում առկա են այնպիսի ձեակերպումներ, որոնց վերաբերյալ պարզապես կարող էր չտրամադրել պարզաբանում առաջնորդվելով վկայակոչված կարգավորումով, ապա մյուս հարցադրումների վերաբերյալ պարզապես էր պարզաբանում ներկայացնել:»:

3. «Գյումրու ԲԿ» ՓԲԸ կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 14.11.2019թ.-ի գրությամբ դիմել է «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 14.11.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 20.11.2019թ.-ին թիվ 1657 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«16.12.2016թ. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ 5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

16.11.2019թ. շաբաթ օրը ստացել ենք հարցադրումը և պարզաբանում չի տրամադրվել, քանի որ 16-17 հանգստյան օրեր էին և ոչ աշխատանքային, բացի այդ պարզաբանման պահանջի մեջ եղել են հարցադրումներ, որոնց մասին ըստ ՀՀ Կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»<< Կառավարության 2019թ-ի ապրիլի 11 516-Ն որոշման 5-րդ կետի <<է>>ենթակետի

22) հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը.

Մեր բոլոր չափաբաժիններում նշված են այն ապրանքների տեխնիկական բնութագրերը, որոնք մենք կիրառել ենք և/կամ կիրառում ենք և քանի որ օրենքը արգելում է

հղում կատարել կոնկրետ ապրանքի, ուստի մենք բոլոր չափաբաժինների համար նշել ենք նաև /կամ համարժեք /նշագրումը:

1. Անհասկանալի է ինչ է նշանակում ուղղորդում բաց մրցույթի պայմաններում, ինչպես նաև նշենք, որ փողերը արդեն իսկ համարակալված են համապատասխան չափաբաժիններով և ոչ մի քողարկված ուղղորդում չեն պարունակում:»:

4. ԳԲԲԱ-LO-2019/90 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 07.11.2019թ. հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 14.11.2019թ.-ի ժամը 14:00-ը:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

5-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «Կաթեպերներ/Ախտորոշիչ Կապեպեր/1»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ «Հավաքածուն կազմված է երկու ախտորոշիչ կաթեպերներից՝ չվնասող, ռենտգենկոնտրաստ դիսպալ ծայրով, կաթեպերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը ոչ պակաս 8273 կիլոպասկալից: Արյան ծավալային հոսքի արագությունն է՝ նվազագույնը՝ 16,7 մլ/վ - 4F; 21,3մլ/վ և ավել- 5F; 21 մլ/վ և ավել - 5,2F, 35 մլ/վ և ավել- 6F կաթեպերի համար: Չափսերն են՝ 4F, 5F,5,2F, 6F, Կաթեպերների ծայրը JR4, JL4, 3DRC, JL3.5: Նյութը նեյլոն, ունի մեդաղյա հյուսապատում, որը օժտում է կաթեպերին ամրությամբ և ունի ատրավմատիկ ռենտգենկոնտրաստ ծայր: CE կամ FDA որակի սերտիֆիկատի առկայություն:»:

Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանող արտադրողների անվանումներ Պատվիրատուի կողմից քննության ընթացքում չներկայացվեցին:

6-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «Կաթեպերներ/Ախտորոշիչ Կապեպեր/2»: Վերջինիս տեխնիկական

բնութագիրը սահմանվել է՝ «Ախտորոշիչ կաթեւեր ինվազիվ պրոցեդուրաների համար: Կախված վիրահատվող հիվանդի քաշից և վիրահատվող անոթից ախտորոշիչ կաթեւերի պահանջվող չափերն են՝ 5Fr, 6Fr (5Fr, 6Fr- ոչ պակաս 37մլ/վրկ անցունակությամբ): կաթեւերների միջոցով հնարավոր է միաժամանակ առանց կաթեւեր փոխելու կատարել աջ և ձախ կորոնար անոթների անգիոգրաֆիա: Կախված վիրահատվող անոթի առանձնահատկություններից ախտորոշիչ կաթեւերի պահանջվող տեսակներն են՝ Tiger I, Tiger II-3.5, Tiger II-4.0, Tiger II-4.5, Tiger II-5.0, BLK-4.0 կամ համարժեք: CE սերտիֆիկատի առկայությունը պարտադիր»:

Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանող արտադրողների անվանումներ Պատվիրատուի կողմից քննության ընթացքում չներկայացվեցին:

11-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «Կաթեւերներ Ախտորոշիչ /3»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ «Կաթեւերի նյութը նեյլոն/պոլիուրեթան , ունի մերտալայա հյուսապատում, որը օժտում է կաթեւերին ամրությամբ և ռենտգենկոնտրաստությամբ: Ունի չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստրալ ծայր, կաթեւերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը ոչ պակաս 8273 կիլոպասկալից: Արյան ծավալային հոսքի արագությունն է ոչ պակաս՝16,7 մլ/վ - 4F; 21,3 մլ/վ և ավել- 5F; 35 մլ/վ և ավել- 6F. կաթեւերի համար: Կաթեւերի ծայրի ձեւերը՝ JL 3,5; JL4; JL4,5; JL5; JL6; AL1; AL2; AL3; JR3,5; JR4; JR4 MOD; JR5; JR5 MOD; JR6; AR MOD; AR1 MOD; AR2 MOD; 3DRS; SRC; MPA1; MPA1; MPB2; LCB; RCB; IM; PIG; PIG145; PIG155; NIH;UNIV; STR; C1; C2; C3;; Shepherd H3; HN3;RCB; LCB /կաթեւերի ծայրի ձևի համար կիրառելի է կամ համարժեք հասկացությունը/ Կաթեւերի երկարությունը (նշված չափերից +-5%)՝ 65 սմ; 80սմ; 100սմ; 125սմ: Կաթեւերի դիստրալ սեգմենտի բազմաձևությունը ապահովվում է անոթի ընդորոշական կաթեւերիզացիա: նյութը ապահովում է կաթեւերի ճկունությունը՝ համապատասխան անոթի: CE կամ FDA որակի սերտիֆիկատի առկայություն: Պետք է լինի նոր, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ:»:

Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանող արտադրողների անվանումներ Պատվիրատուի կողմից քննության ընթացքում չներկայացվեցին:

12-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «Կաթեւերներ/ՊՅՍ՝ Ի՞նչի»՞»»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ «Արտաքին շերտը նեյլոնից է, միջին շերտը՝ երկշերտ կամ եռաշերտ

հյուսապատված պողպատ և ներքին շերտը PTFE(պոլիտեֆորաֆտորէտիլեն),
 ռենդգենկոնտրաստ դիսպալ ծայրով, որի երկարությունն է 2,3-2,5մմ կամ 14-16մմ:
 Բազմահատվածային կառուցվածք, փարբեր հատվածների ջերմաձուլում (փափուկ ծայրի,
 ձևավորող մասի, հիմնական մարմնի): Ծայրը փափուկ է, ճկուն և չվնասող
 (ապրավմատիկ): Հյուսապատման “հիբրիդ տեխնոլոգիան ավելացնում է կաթեթերի
 ներքին լուսանցը և աջակցում է մանիպուլյացիայի պրոցեսին: Կաթեթերի պատի
 մեթաղապատումը ցանցով խոչնդոպում է գործիքի ծալմանը անոթների անապրոմիական
 ծալքերի տեղում: Կաթեթերները ունեն հավասարաչափ ներքին լուսանցք ամբողջ
 երկայնքով: Ներքին լուսանցքի չափերն են՝ 9F – 0.098”, 8F-0.088”, 7F-0.078”, 6F-0.070:
 Երկարությունն է(նշված չափերից+5%)՝ 55սմ, 90սմ,95սմ, 125սմ: Կաթեթերի ծայրի ձևերը՝
 JL3; JL3 SH; JL3,5; JL3,5 SH; JL3,5 ST;JL3,5 ST SH; JL4; JL4 ST; JL4 SH; JL4 ST SH; JL4,5; JL4,5
 ST;JL4,5 SH; JL5; JL5 ST; JL5 SH; JL5 ST SH; JL6; JL3,5 MOD ST; JL4 MOD ST; JCL3,5; JCL 3,5
 SH; JCL4; JCL4 SH; JCL4,5; JCL4,5 SH; JCL5 SH; XB3; XB3 SH; XB3,5; XB3,5 SH; XBLAD 3,5;
 XB4; XB4SH; XB LAD4; XB4,5; XB4,5 SH; XB LAD 4,5; AL.75; AL1; AL1ST; AL1 ST SH; AL1SH;
 AL 1,5; AL 1,5 ST; AL1,5 SH; AL 1,5 ST SH; AL2; AL2 ST; AL2 SH; AL2 ST SH; AL3; AL3 ST; AL3
 SH; JR3,5; JR 3,5 ST; JR 3,5 SH; JR 3,5 ST SH; JR 4; JR4 ST; JR4 SH; JR4 ST SH; ; SPB 3,5,
 SPB 3,0, PB 3,5, JR 4,5 ST; JR 4,5 ST SH; JR5; JR5 ST; JR5 SH; JR 6; JR6 SH; JCR 3,5; JCR 3,5
 SH; JCR 4; JCR 4 SH; SCR3,5; SCR4; XBR1; XBR2; XBR CA; 3 DRC; AR1; AR1 SH; AR2; AR2
 SH; ALR1,2; ALR 1,2 SH; NR4; JFL; JFL ST; JFL LT; JFR; JFR ST; RB; SON1; CAS1; CAS2; MPA1;
 MPA 1 SH; MPB1; MPB1 SH; H- STICK; H-STICK SH; LCB; LCB SH; RCB; RCB SH Պետք է լինի
 նոր, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառի տեխնիկական ցուցանիշները,
 օգտագործման կանոնները գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին
 մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ
 ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող
 ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող
 ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Պատվիրատուն իրավունք ունի ըստ
 անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է
 պիտանելիության ժամկետի առնվազն 40%-ը: Եթե առկա են հղումներ ֆիրմային
 անվանմանը, արտոնագրին, էսքիզին, մոդելին կամ արտադրողին կիրառական է <<կամ
 համարժեք>> արտահայտությունը:»:

Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին
 համապատասխանող արտադրողների անվանումներ Պատվիրատուի կողմից քննության
 ընթացքում չներկայացվեցին:

15-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «դեղապատ սրենյու/ 1»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ «Սրենյուի նյութը և կառուցվածքը - լազերով կտրված կորալուքրոմի կամ պլատինիում քրոմի համաձուլվացքից կազմված գլան, սրենյուի ծածկը - էվերոլիմուս կամ զոտարալիմուս դեղանյութ արտազատող ծածկ: Սրենյուի կառուցվածքը՝ 2.25-3.0 մմ տրամագծով սրենյուն պեպը է ունենա երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5-4.0 մմ-ոց սրենյուն պեպը է ունենա երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Սրենյուի եզրային օղը պեպը է ձևավորված լինի սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Սրենյուի պատերի հաստությունը - ոչ ավել քան 0.0032"»: Սրենյուի երկայնաձիգ ճկունությունը պեպը է լինի գերազանց: Սրենյուը պեպը է լինի ոչ ֆեռոմագնիսական և ունենա բարձր ճառագայթային ուժ: Մետաղական մակերեսի ընդարձակում - 13.3%-ի սահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում, 12.8%-ի սահմաններում՝ 4.0 մմ-ի դեպքում: Լայնացումից առաջացած կարճացում - 0% 3.0 x 18 մմ սրենյուի համար: Անկախ լայնացման աստիճանից չպեպը է գերազանցի սրենյուի երկարության 5%-ը: Հեղազատ տեղաշարժման հավանականությունը ոչ ավել քան 4.4%, 3.0 x 18 մմ սրենյուի համար: Սրենյուի բացման նոմինալ ճնշումը՝ ոչ ավել 11 atm պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm (բոլոր տրամագծերի սրենյուների համար): Անցման պրոֆիլը՝ 0.0425" (3.0 x 18), ծայրի մուտքի պրոֆիլը՝ 0.017" $\pm 2\%$: Բալոնի միջին չափսը - առավելագույնը 0.041 դոյմ կամ 1.04 մմ՝ 3.0x18 մմ սրենյուի համար: Բալոնը՝ բարակ երկակի շերտով, նյութը՝ բազմաշերտ պեբաքս կամ համրժեք: Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը - 0.056 դոյմ կամ 1.4 մմ (բոլոր չափսի սրենյուների համար): Սրենյուի դեղորայքային ծածկը պեպը է բաղկացած լինի ակրիլային և ֆլուրոպոլիմերներից, որոնք օգտագործվում են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան սրենյուի մակերեսին - 88 մկգ/սմ² $\pm 2\%$: : Կախված վիրահատվող անոթի տրամագծից սրենյուի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ: Բացված սրենյուի մաքսիմալ տրամագիծը՝ 2.0-2.5-ը մինչև 3.25 մմ, 2.75-3.0-ը մինչև 3.75 մմ, 3.5-4.0-ը մինչև 4.5 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից սրենյուի պահանջվող չափերն են ըստ երկարության՝ 8, 12, 15, 18, 23, 28 մմ (2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում), 8, 12, 15, 18, 23, 28, 33, 38 մմ (2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում): Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK կամ FDA որակի վկայականների առկայությունը պարտադիր է: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար պարտադիր է արտադրող կազմակերպության

կողմից մատակարարին տրված ծագման սերտիֆիկատի առկայությունը: Պեղք է լինի նոր, չօգտագործված, գործարանային սրերիլ փաթեթավորմամբ: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով:»:

Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանող արտադրողների անվանումներ Պատվիրատուի կողմից քննության ընթացքում չներկայացվեցին:

www.gnumner.am կայքում հրապարակված չէ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ պարզաբանման համար կատարված հարցման վերաբերյալ հայտարարություն (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 14.11.2019թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում

ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի

Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառույթային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 07.11.2019թ. հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

5-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «Կաթեպերներ/Ախտորոշիչ Կաթեպեր/1»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ « Հավաքածուն կազմված է երկու ախտորոշիչ կաթեպերներից՝ չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստրալ ծայրով, կաթեպերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը ոչ պակաս 8273 կիլոպասկալից: Արյան ծավալային հոսքի արագությունն է՝ նվազագույնը՝ 16,7 մլ/վ - 4F; 21,3մլ/վ և ավել- 5F; 21 մլ/վ և ավել - 5,2F, 35 մլ/վ և ավել- 6F կաթեպերի համար: Չափսերն են՝ 4F, 5F,5,2F, 6F, Կաթեպերների ծայրը JR4, JL4, 3DRC, JL3.5: Նյութը նեյլոն, ունի մեդաղյա հյուսապատում, որը օժտում է կաթեպերին

ամրությամբ և ունի ատրավմատիկ ռենդգենկոնտրաստ ծայր: CE կամ FDA որակի սերտիֆիկատի առկայություն:»:

6-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «Կաթեպերներ/Ախտորոշիչ Կատեպեր/2»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ «Ախտորոշիչ կաթեպեր ինվազիվ պրոցեդուրաների համար: Կախված վիրահատվող հիվանդի քաշից և վիրահատվող անոթից ախտորոշիչ կաթեպերի պահանջվող չափերն են՝ 5Fr, 6Fr (5Fr, 6Fr- ոչ պակաս 37մլ/վրկ անցունակությամբ): Կաթեպերների միջոցով հնարավոր է միաժամանակ առանց կաթեպեր փոխելու կատարել աջ և ձախ կորոնար անոթների անգիոգրաֆիա: Կախված վիրահատվող անոթի առանձնահատկություններից ախտորոշիչ կաթեպերի պահանջվող տեսակներն են՝ Tiger I, Tiger II-3.5, Tiger II-4.0, Tiger II-4.5, Tiger II-5.0, BLK-4.0 կամ համարժեք: CE սերտիֆիկատի առկայությունը պարտադիր»:

11-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «Կաթեպերներ Ախտորոշիչ /3»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ «Կաթեպերի նյութը նեյլոն/պոլիուրեթան , ունի մետաղյա հյուսապատում, որը օժտում է կաթեպերին ամրությամբ և ռենդգենկոնտրաստությամբ: Ունի չվնասող, ռենդգենկոնտրաստ դիստալ ծայր, կաթեպերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը ոչ պակաս 8273 կիլոպասկալից: Արյան ծավալային հոսքի արագությունն է ոչ պակաս՝16,7 մլ/վ - 4F; 21,3 մլ/վ և ավել- 5F; 35 մլ/վ և ավել- 6F. կաթեպերի համար: Կաթեպերի ծայրի ձևերը՝ JL 3,5; JL4; JL4,5; JL5; JL6; AL1; AL2; AL3; JR3,5; JR4; JR4 MOD; JR5; JR5 MOD; JR6; AR MOD; AR1 MOD; AR2 MOD; 3DRS; SRC; MPA1; MPA1; MPB2; LCB; RCB; IM; PIG; PIG145; PIG155; NIH;UNIV; STR; C1; C2; C3;; Shepherd H3; HN3;RCB; LCB /կաթեպերի ծայրի ձևի համար կիրառելի է կամ համարժեք հասկացությունը/ Կաթեպերի երկարությունը (նշված չափերից +-5%)՝ 65 սմ; 80սմ; 100սմ; 125սմ: Կաթեպերի դիստալ սեգմենտի բազմաձևվությունը ապահովվում է անոթի ընդրողական կաթեպերիզացիա: նյութը ապահովում է կաթեպերի ճկունությունը՝ համապատասխան անոթի: CE կամ FDA որակի սերտիֆիկատի առկայություն: Պետք է լինի նոր, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ:»:

12-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «Կաթեպերներ՝ՊՅՍ՝ իՅ՝իճ»»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ «Արտաքին շերտը նեյլոնից է, միջին շերտը՝ երկշերտ կամ եռաշերտ հյուսապատված պողպատ և ներքին շերտը PTFE(պոլիտեֆտրաֆտորէտիլեն), ռենդգենկոնտրաստ դիստալ ծայրով, որի երկարությունն է 2,3-2,5մմ կամ 14-16մմ:

Բազմահատվածային կառուցվածք, փարբեր հատվածների ջերմաձուլում (փափուկ ծայրի, ձևվալորող մասի, հիմնական մարմնի): Ծայրը փափուկ է, ճկուն և չվնասող (ապրավմարիկ): Հյուսապարման “հիբրիդ փեխնոլոգիան ավելացնում է կաթեպերի ներքին լուսանցը և աջակցում է մանիպուլյացիայի պրոցեսին: Կաթեպերի պարի մեխանիկայումը ցանցով խոչնդոտում է գործիքի ծալմանը անոթների անադրմիական ծալքերի փրկում: Կաթեթերները ունեն հավասարաչափ ներքին լուսանցք ամբողջ երկայնքով: Ներքին լուսանցքի չափերն են՝ 9F – 0.098”, 8F-0.088”, 7F-0.078”, 6F-0.070: Երկարությունն է(նշված չափերից+5%)՝ 55սմ, 90սմ,95սմ, 125սմ: Կաթեպերի ծայրի ձևերը՝ JL3; JL3 SH; JL3,5; JL3,5 SH; JL3,5 ST;JL3,5 ST SH; JL4; JL4 ST; JL4 SH; JL4 ST SH; JL4,5; JL4,5 ST;JL4,5 SH; JL5; JL5 ST; JL5 SH; JL5 ST SH; JL6; JL3,5 MOD ST; JL4 MOD ST; JCL3,5; JCL 3,5 SH; JCL4; JCL4 SH; JCL4,5; JCL4,5 SH; JCL5 SH; XB3; XB3 SH; XB3,5; XB3,5 SH; XBLAD 3,5; XB4; XB4SH; XB LAD4; XB4,5; XB4,5 SH; XB LAD 4,5; AL.75; AL1; AL1ST; AL1 ST SH; AL1SH; AL 1,5; AL 1,5 ST; AL1,5 SH; AL 1,5 ST SH; AL2; AL2 ST; AL2 SH; AL2 ST SH; AL3; AL3 ST; AL3 SH; JR3,5; JR 3,5 ST; JR 3,5 SH; JR 3,5 ST SH; JR 4; JR4 ST; JR4 SH; JR4 ST SH; ; SPB 3,5, SPB 3,0, PB 3,5, JR 4,5 ST; JR 4,5 ST SH; JR5; JR5 ST; JR5 SH; JR 6; JR6 SH; JCR 3,5; JCR 3,5 SH; JCR 4; JCR 4 SH; SCR3,5; SCR4; XBR1; XBR2; XBR CA; 3 DRC; AR1; AR1 SH; AR2; AR2 SH; ALR1,2; ALR 1,2 SH; NR4; JFL; JFL ST; JFL LT; JFR; JFR ST; RB; SON1; CAS1; CAS2; MPA1; MPA 1 SH; MPB1; MPB1 SH; H- STICK; H-STICK SH; LCB; LCB SH; RCB; RCB SH Պետք է լինի նոր, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառի փեխնիկական ցուցանիշները, օգտագործման կանոնները գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 փարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 փարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 փարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է պիտանելիության ժամկետի առնվազն 40%-ը: Եթե առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էքսիզին, մոդելին կամ արտադրողին կիրառական է <<կամ համարժեք>> արտահայտությունը:»:

15-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «դեղապատ սրենյո/ 1»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ «Սրենյոյի նյութը և կառուցվածքը - լազերով կտրված կոբալտ-քրոմի կամ պլատինիում քրոմի համաձուլվացքից կազմված գլան, սրենյոյի ծածկը - էվերոլիմուս կամ զոլտարալիմուս դեղանյութ արտազատող ծածկ: Սրենյոյի կառուցվածքը՝ 2.25-3.0 մմ տրամագծով սրենյուն

պետք է ունենա երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5-4.0 մմ-ոց սրենսն պետք է ունենա երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Սրենսնի եզրային օղը պետք է ձևավորված լինի սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Սրենսնի պատերի հաստությունը - ոչ ավել քան 0.0032": Սրենսնի երկայնաձիգ ճկունությունը պետք է լինի գերազանց: Սրենսնը պետք է լինի ոչ ֆեռոմագնիսական և ունենա բարձր ճառագայթային ուժ: Մետաղական մակերեսի ընդարձակում - 13.3%-ի սահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում, 12.8%-ի սահմաններում՝ 4.0 մմ-ի դեպքում: Լայնացումից առաջացած կարճացում - 0% 3.0 x 18 մմ սրենսնի համար: Անկախ լայնացման աստիճանից չպետք է գերազանցի սրենսնի երկարության 5%-ը: Հետագա տեղաշարժման հավանականությունը ոչ ավել քան 4.4%, 3.0 x 18 մմ սրենսնի համար: Սրենսնի բացման նոմինալ ճնշումը՝ ոչ ավել 11 atm պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm (բոլոր տրամագծերի սրենսնների համար): Անցման պրոֆիլը՝ 0.0425" (3.0 x 18), ծայրի մուտքի պրոֆիլը՝ 0.017" $\pm 2\%$: Բալունի միջին չափսը - առավելագույնը 0.041 դույմ կամ 1.04 մմ՝ 3.0x18 մմ սրենսնի համար: Բալունը՝ բարակ երկակի շերտով, նյութը՝ բազմաշերտ պեբաքս կամ համրժեք: Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը - 0.056 դույմ կամ 1.4 մմ (բոլոր չափսի սրենսնների համար): Սրենսնի դեղորայքային ծածկը պետք է բաղկացած լինի ակրիլային և ֆլյուրո պոլիմերներից, որոնք օգտագործվում են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան սրենսնի մակերեսին - 88 մկգ/սմ² $\pm 2\%$: : Կախված վիրահատվող անոթի տրամագծից սրենսնի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ: Բացված սրենսնի մաքսիմալ տրամագիծը՝ 2.0-2.5-ը մինչև 3.25 մմ, 2.75-3.0-ը մինչև 3.75 մմ, 3.5-4.0-ը մինչև 4.5 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից սրենսնի պահանջվող չափերն են ըստ երկարության՝ 8, 12, 15, 18, 23, 28 մմ (2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում), 8, 12, 15, 18, 23, 28, 33, 38 մմ (2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում): Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK կամ FDA որակի վկայականների առկայությունը պարտադիր է: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար պարտադիր է արտադրող կազմակերպության կողմից մատակարարին տրված ծագման սերտիֆիկատի առկայությունը: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային սրերիլ փաթեթավորմամբ: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով:»:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 5-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ չափաբաժինների մասով սահմանված պահանջները չեն

ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը, սահմանափակում են ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը, հիմնված չեն գնման գործընթացի մրցակցային, համաչափ, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, որն էլ առաջացրել է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների:

Այսպես՝ Բողոքաբեր Ընկերության կողմից ներկայացված այն փաստերի վերաբերյալ, ըստ որոնց՝

1. 5 եւ 11 չափաբաժիններով ներկայացված է 4 եւ 5.2Fr ներքին լուսանցքով ախտորոշիչ կաթետորները բնորոշ են միայն Cordis ֆիրմայի ախտորոշիչ կաթետորներին,

2. 6-րդ չափաբաժնով ներկայացված ախտորոշիչ կաթետորների տեսակները բնորոշ են միայն Terumo ֆիրմայի ախտորոշիչ կաթետորներին,

3. 12 չափաբաժնով ներկայացված ապրանքնի ծայրերի ձևերը բնորոշ է միայն Cordis ֆիրմայի Vista Bride ապրանքանիշին,

4. 15 չափաբաժնով ներկայացված ապրանքնի տեխնիկական բնութագիրը բնորոշ է միայն Էվերոլիմուս դեղաձածկույթով ստեղծված,

Պատվիրատուի կողմից, ներկայացված բողոքի պատասխանով, չի ներկայացվել, որևէ վերաբերելի ապացույց, առ այն, որ չափորոշիչները համապատասխանում են առնվազն 2 արտադրողների բնութագրերին, այն որ բողոքի քննության առարկա հանդիսացող չափաբաժինների մասով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանում են այլ արտադրողների անվանումներ:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքում նշած այն հանգամանքին, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի տրամադրել պարզաբանում, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել հետևյալը.

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը

կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ www.gnumner.am կայքում հրապարակված չէ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ պարզաբանման համար կատարված հարցման վերաբերյալ հայտարարություն (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

Բողոքներ քննող անձը, վերոնշյալներով պայմանավորված, գտնում է, որ Պատվիրատուն պարզաբանում չտրամադրելով խախտել է Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Սակայն, սույն դեպքում, պարզաբանում չտրամադրելը չի կարող գնահատվել, որպես մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացում, քանի որ Ընկերության կողմից բարձրացված ներքոնշյալ հարցադրումների՝

1. «*Չափաբաժինները կոտորակով ներկայացված ձեռագրով, ըստ համարների, ի՞նչ է նշանակում, հայտատուն որպես ինչ պետք է դրանք մեկնաբանի եւ ընկալի, արդյո՞ք դրանք չեն կարող ընկալվել որպես ծածկագրեր, որոնք քողարկված ուղորդում են նշանակում*» վերաբերյալ պարզաբանում չտրամադրելը չի կարող գնահատվել, որպես մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացում:

2. «*16 և 17 չափաբաժիններով պահանջվում է դեղապատ ստենդ եւ բնութագրերով նշված է, որ դրանք պետք է լինեն էվերոլիմուս, սիրոլիմուս դեղանյութով արդյո՞ք համարժեք կդիտարկվի զոտարալիմուս դեղանյութով պատված ստենդը, որը նույնպես պատկանում է լիմուս դեղախմբերի ընդհանրին սակայն տեխնիկական չափորոշիչներով նույնը չէ բայց ֆունկցիոնալ առումով հնարավոր է հասնել նույն արդյունքին, ինչը պահանջվում է տեխնիկական բնութագրով*» վերաբերյալ կատարված հարցումը վերաբերում է մասնակցի կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը, իսկ այդ դեպքում չի տրամադրվում պարզաբանում, հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետի դրույթները:

3. «*18, 19, 20, 21, 22 չափաբաժիններով պահանջվում է բալոնային կաթետերներ, այս չափաբաժիններում նշված են կաթետրի հստակ երկարությունը, բալոնի նյութը, տրամագիծը, երկարությունը, սակայն նշված սահմանափակումներով արդյո՞ք չի ապահովում մեկ արտադրողից ապրանքի գնում, պարզաբանել նշելով սահմանափակումների անհրաժեշտությունը եւ նպատակը, մինչդեռ՝ տարբեր արտադրողների մոտ երկարությունը, բալոնի նյութը, տրամագիծը լինում է տարբեր,*

սակայն ֆունկցիոնալ առումով թույլ են տրախս հասնել նույն արդյունքին ինչպես նշված է տեխնիկական բնութագրում» վերաբերյալ կատարված հարցումը վերացական է:

Նման պայմաններում, պետք է փաստել, որ Ընկերության համար մրցակցության հավասար պայմանների որևէ սահմանափակում, ինչպես նաև գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ չեն առաջացել, վերջինս զրկված չի եղել մասնակցության հայտ ներկայացնելու իրավունքից, որպիսի պայմաններում նույնպես Ընթացակարգը այդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու համար բավարար հիմքեր առկա չեն:

Վերոնշյալներով պայմանավորված, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 5-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ չափաբաժինների մասով սահմանված պայմաններն ու պահանջները վերաբերում են միայն մեկ արտադրող ընկերության անվանումներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով թիվ 5-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ չափաբաժինների մասով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներն այդ չափաբաժինների մասով անհիմն են և սահմանափակում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքները:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 5-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ չափաբաժինների մասով թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ընթացակարգն այդ մասով պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 14.11.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/90 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը՝ թիվ 5-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ չափաբաժինների մասով:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**



ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ